ԱՐԴԱՐԱՑԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ [1]

I. Ներածություն

1. Արդարացի փոխհատուցման հատկացումը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով և կից արձանագրություններով երաշխավորված որևէ իրավունքի խախտման արձանագրման ինքնստինքյան հետևանքը չէ: 41 -րդ հոդվածի համաձայն Դատարանը որոշում է կայացնում արդարացի փոխհատուցման վերաբերյալ միայն այն դեպքում, երբ ներպետական օրենսդրությունը թույլ չի տալիս խախտված իրավունքների լիարժեք վերականգնում և նույնիսկ այդ ժամանակ դա իրականացվում է միայն «անհրաժեշտության դեպքում»:

2. Բացի այդ, Դատարանի կողմից Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն հատկացված փոխհատուցումը պետք է լինի «արդարացի»՝ հաշվի առնելով գործի հանգամանքները: Հետևաբար, Դատարանը հաշվի է առնում յուրաքանչյուր գործի առանձնահատկությունները: Դատարանը կարող է որոշել, որ Կոնվեցիայի խախտման արձանագրումն ինքնին բավարար արդարացի փոխհատուցում է այս կամ այն ենթադրյալ վնասի դիմաց և չնախատեսել նյութական փոխհատուցում : Այն կարող է նաև արդարությունից ելնելով հատկացնել փաստացի վնասի կամ ծախսի արժեքից պակաս գումար կամ նույնիսկ չնախատեսել փոխհատուցում: Սա կարող է լինել այն դեպքում, եթե, օրինակ, ստեղծված իրավիճակը, վնասի կամ ծախսերի չափը պայմանավորված են դիմումատուի մեղքով : Հատկացվելիք գումարի սահմանման համար Դատարանը կարող է նաև հաշվի առնել դիմումատուի, որպես խախտման արդյունքում տուժողի և Պայմանավորվող կողմի, որպես հանրային շահի պատասխանատուի, համապատասխան դիրքորոշումները: Վերջապես, Դատարանը սովորաբար հաշվի է առնում նաև տվյալ պետության տնտեսական իրավիճակը:

3. Երբ Դատարանը Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն փոխհատուցում է նախատեսում, ապա այն կարող է որոշել հիմնվել ներպետական չափանիշների վրա: Սակայն, պետք է նշել, որ Դատարանը կաշկանդված չէ ներպետական չափանիշներով:

4. Այն դիմումատուները, որոնք ցանկանում են արդարացի փոխհատուցման դիմում ներկայացնել, պարտավոր են հարգել Կոնվենցիայով և Դատարանի կանոնակարգով սահմանված պահանջները ՝ կապված դիմումի ձևի և բովանդակության հետ:

II. Արդարացի փոխհատուցման դիմումի ներկայացում՝ ձևական պահանջներ

5. Արդարացի փոխհատուցման դիմումի ներկայացման ժամկետները և այլ ձևական պահանջները սահմանվում են Դատարանի կանոնակարգի 60-րդ կանոնով, որի համապատասխան դրույթները հետևյալն են՝

> «1. Դիմումատուն, որը ցանկանում է իր իրավունքների խախտման արձանագրման դեպքում Դատարանի կողմից արդարացի փոխհատուցման ստանալ համաձայն Կոնվենցիայի 41-րդ հոդվածի, պետք է դրա վերաբերյալ ներկայացնի հստակ պահանջ:

[1] Գործնական ցուցումներ՝ հրապարակված Դատարանի

2. Գործի էության վերաբերյալ փաստարկների ներկայացման համար սահմանված ժամկետներում, դիմումատուն պետք է ներկայացնի իր մանրամասն պահանջները՝համապատասխան հիմնավորող փաստաթղթերով, եթե Պալատի նախագահն այլ բան չի հրահանգում:

3. Եթե դիմումատուն չի պահպանում նախորդ կետերում նշված պահանջները, Պալատը կարող է ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժել պահանջները:

... »

Այսպիսով, դատարանը պահանջում է ներկայացնել հստակ պահանջներ՝ համապատասխան հիմնավորող փաստաթղթերով, որոնց բացակայության դեպքում Դատարանը արդարացի փոխհատուցում չի հատկացնում: Դատարանը կարող է նաև մերժել դիմումի ձևաթղթում նշված, սակայն վարույթի համապատասխան փուլում չվերահաստատված արդարացի փոխհատուցման պահանջները: Մերժվում են նաև սահմանված ժամկետներից հետո ներկայացրած պահանջները:

III. Արդարացի փոխհատուցման դիմումի ներկայացում՝ հիմնական պահանջներ

6. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն՝ արդարացի փոխհատուցում հատկացվում է՝

ա) նյութական վնասի համար,
բ) ոչ նյութական վնասի համար,
գ) ծախսերի և ծախքերի համար:

1. Վնասն ընդհանուր առմամբ

7. Պետք է հստակորեն ներկայացվի ենթադրյալ խախտման և վնասի պատճառահետևանքային կապը : Դատարանը չի կարող բավարարվել միայն ենթադրյալ խախտման և վնասի միջև աննշան կապով, ոչ էլ զուտ հնարավոր վնասի մասին շահարկումներով:

8. Վնասի փոխհատուցում հատկացվում է այնքանով, որքանով այդ վնասը խախտման հետևանք է: Փոխհատուցում չի հատկացվում այն վնասների համար, որոնք պատճառվել են այն իրադարձությունների կամ իրավիճակների արդյունքում, որոնք Դատարանը չի համարում Կոնվենցիայի խախտում, կամ վարույթի ավելի վաղ փուլում անընդունելի ճանաչված գանգատների հետ կապված վնասների համար:

9. Վնասի փոխհատուցումը նպատակ ունի փոխհատուցել խախտման փաստացի վնասը : Այն չի կիրառվում որպես պատիժ տվյալ Պայմանավորվող կողմի նկատմամբ: Ուստի, մինչ այժմ Դատարանը նպատակահարմար չի համարել ընդունել փոխհատուցման այնպիսի դիմումները, որոնք դասակարգվում են որպես «պատժիչ», «ծանրացնող» կամ «օրինակելի»:

2. Նյութական վնաս

10. Նյութական վնասի առումով կիրառվող սկզբունքն այն է, որ հնարավորության դեպքում պետք է դիմումատուն հայտնվի այնպիսի իրավիճակում, որում նա կլիներ, եթե խախտում տեղի չունենար, այլ կերպ ասած՝ նախնական իրավիճակի վերականգնում (*restitutio in integrum*): Սա կարող է ներառել թե՛ փաստացի կորստի (*damnum emergens*), թե՛ապագայում հնարավոր կորստի և բաց թողնված եկամտի դիմաց փոխհատուցումները (*lucrum cessans*):

11. Դիմումատուն պարտավոր է ապացուցել ենթադրյալ խախտման կամ խախտումների արդյունքում պատճառված նյութական վնասի առկայությունը: Դիմումատուն պետք է

ներկայացնի համապատասխան փաստաթղթեր, որոնք կապացուցեն ոչ միայն վնասի առկայությունը, այլև վնասի չափն ու գումարը:

12. Սովորաբար, Դատարանի տրամադրած փոխհատուցումը արտացոլում է հաշվարկված վնասի ամբողջական չափը: Այնուամենայնիվ, եթե իրական վնասը չի կարող ճշգրիտ հաշվարկվել, ապա Դատարանը կատարում է գնահատում՝ իր տրամադրության տակ եղած փաստերի հիման վրա : Ինչպես նշված է 2-րդ կետում, հնարավոր է նաև, որ արդարացիությունից ելնելով Դատարանը հատկացնի կորստի ամբողջական գումարից պակաս փոխհատուցում:

3. Ոչ նյութական վնաս

13. Ոչ նյութական վնասի փոխհատուցման հատկացմամբ Դատարանը նախատեսում է տրամադրել ֆինանսական փոխհատուցում ոչ նյութական վնասի համար, օրինակ՝ հոգեկան կամ ֆիզիկական տառապանքների դիմաց:

14. Իր բնույթով ոչ նյութական վնասը ենթակա չէ ճշգրիտ հաշվարկման: Եթե նման վնասի առկայությունը հաստատվում է, և եթե Դատարանը գտնում է, որ դրամական փոխհատուցումն անհրաժեշտ է, ապա այն գնահատում է կատարում արդարացիության սկզբունքով `հաշվի առնելով այն չափանիշները, որոնք բխում են իր նախադեպային իրավունքից:

15. Դիմումատուները, ովքեր ցանկանում են ստանալ ոչ նյութական վնասի դիմաց փոխհատուցում, պետք է հստակեցնեն այն գումարի չափը, որն իրենց կարծիքով արդարացի կլինի: Դիմումատուները, ովքեր իրենց համարում են մեկից ավելի խախտման զոհ, կարող են պահանջել միանվագ գումար բոլոր ենթադրյալ խախտումների դիմաց կամ առանձին գումար յուրաքանչյուր ենթադրյալ խախտման դիմաց:

4. Ծախսեր և ծախքեր

16. Դատարանը կարող է փոխհատուցում տրամադրել դիմումատուի կողմից նախ ներպետական մակարդակում, ապա Դատարանում վարույթի ընթացքում կատարված ծախսերի ու ծախքերի դիմաց՝ այսպիսով փորձելով կանխել խախտումները կամ վերացնել հետևանքները: Նման ծախսերը և ծախքերը սովորաբար ներառում են իրավաբանական օգնության ծախսերը, դատարանում գրանցման տուրքերը և այլ նմանատիպ ծախսերը : Նրանք կարող են նաև ներառել Ճանապարհորդական և կացության ծախսերը, մասնավորապես, եթե դրանք առաջացել են Դատարանի լսումներին մասնակցության կապակցությամբ:

17. Դատարանն ընդունում է ծախսերի և ծախքերի փոխհատուցման միայն այն պահանջները, որոնց կապակցությամբ այն խախտում է արձանագրել: Անընդունելի ճանաչված դիմումների կամ խախտում չարձանագրած գործերի դեպքում, Դատարանը մերժում է փոխհատուցման պաանջները: Այս դեպքերում, դիմումատուները կարող են ցանկանալ վնասների հատուցման առանձին պահանջները բաժանել տարբեր բողոքներին համապատասխան:

18. Ծախսերը և ծախքերը պետք է կատարված լինեն իրականում : Այսինքն, դիմումատուն պետք է կամ վճարի կամ պարտավորվի վճարել ծախսերը և ծախքերը՝ համաձայն իրավաբանական կամ պայմանագրային պարտավորության: Իրավաբանական օգնության ձևով ազգային իշխանությունների կամ Եվրոպայի խորհրդի կողմից վճարված կամ վճարման ենթակա ցանկացած գումար նվազեցվում է ծախսերի և ծախքերի համար հատկացված գումարից:

19. Ծախսերը և ծախքերը պետք է կատարված լինեն անհրաժեշտությունից ելնելով, այսինքն՝ դրանք ունեցել են անխուսափելի բնույթ խախտումները կանխելու կամ դրանք վերականգնելու համար:

20. Ծախսերը և ծախքերը պետք է լինեն խելամիտ: Եթե դատարանը գտնում է, որ դրանք չափից ավելի են, ապա իր գնահատմամբ որոշում է խելամիտ գումարի չափը:

21. Դատարանը պահանջում է վճարման ապացույցներ, ինչպիսիք են հոնորարների հաշիվները և վճարման անդորրագրերը: Նշված փաստաթղթերը պետք է լինեն բավականաչափ մանրամասն, որպեսզի Դատարանը կարողանա որոշել, թե որքանով վերը նշված պահանջները կարող են բավարարվել:

5. Վճարման համար անհրաժեշտ տեղեկատվություն

22. Դիմումատուները պետք է տրամադրեն բանկային հաշիվ, որով նրանք ցանկանում ստանալ հատկացված գումարները : Եթե նրանք ցանկանում են, որ կոնկրետ գումարները, օրինակ, ծախսերի և ծախքերի համար փոխհատուցումները, վճարվեն առանձին՝ օրինակ անմիջապես իրենց ներկայացուցչի բանկային հաշվին, ապա նրանք պետք է հստակեցնեն դա:

IV. Դատարանի կողմից սահմանված փոխհատուցման ձևերը

23 Դատարանի կողմից սահմանված փոխհատուցումները սովորաբար դրամական գումարներ են, որոնք պատասխանող Պայմանավորվող կողմը պետք է վճարի խախտումների զոհին կամ զոհերին: Միայն շատ հազվադեպ դեպքերում Դատարանը կարող է հրահանգել պատասխանող Պայմանավորվող կողմին ձեռնարկել այս կամ այն միջոցառումը համապատասխան խախտումները դադարեցնելու կամ դրանց հետևանքները վերացնելու համար: Այնուամենայնիվ, Դատարանը կարող է, իր հայեցողությամբ, առաջարկել ուղղորդել պետությանը վճռի կատարման վերաբերյալ (Կոնվենցիայի 46-րդ հոդված):

24. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի հիման վրա ցանկացած դրամական փոխհատուցում պետք է լինի եվրոյով (EUR, €)՝ անկախ դիմումատուի կողմից ներկայացված պահանջի արժույթից : Եթե դիմումատուին պետք է վճարվի այլ արժույթով, ապա Դատարանը հրահանգում է եվրոյով արտահայտված գումարը ներկայացնել տվյալ արժույթով՝ վճարման օրվա փոխարժեքով: Փոխհատուցման դիմումի ձևակերպման ժամանակ, դիմումատուները պետք է հաշվի առնեն այս մոտեցման հետևանքները՝ մասնավորապես եվրոյից այլ արժույթ և հակառակը փոխանակման ժամանակ:

25. Դատարանն իր նախաձեռնությամբ սահմանում է վճարումների ժամկետը, որը, սովորաբար, եռամսյա է՝ վճռի վերջնական և պարտադիր դառնալու ամսաթվից սկսած: Ժամկետի չպահպանման դեպքում Դատարանը կարող է նաև հարկադրել վճարել տուգանք պարտավորությունների չկատարման ժամանակահատվածի համար՝ սահմանված գումարի վրա կիրառելով սովորական տոկոս, որը հավասար է Եվրոպական կենտրոնական բանկի փոխառության տրամադրման ամենացածր տոկոսադրույքին ավելացրած երեք տոկոս: